ՆՈՐ-ԴԱՐ

№ 89 ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 24 Մայիսի 1895 Հինգշաբթի 24 Մայիսի ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 89

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ. բաժանորդ գրուում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ի մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներո յայտարարութիւնների գառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Հայկական բարեփոխութիւնների գործադրութիւնը: Վեհ. կաթողիկոսի ուղեւորութիւնը Պետերբուրգ: Քրոնիկոն. — Վեհափառի ուղեւորութիւնը: Մայր-Աթոռի գործերը: Վեհ. Հայրապետի հեռագիրը: Քննութիւնները ճեմարանում: Գերմ. նոր հիւպատոս Թիֆլիսում: Բագու քաղաքի վոխառութիւնը: Արժ. Այվազեանի մահը: Երկաթուղու իջեցրած սակագներ: Ուսման վարձը Երևանի գիմնազիոնում: Շահլամեանը Բագուում: Մի արձանագրութիւն: Մաքսային նոր կանոններ: Երևանից: Գանձակից:

Փոթորիկ, անձրև, կարկուտ ու ջրանց վնասները Գանձակին:

Թղթակցութիւններ.—Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլիս: Քաղաքական. — Անգլիա: Իտալիա Ֆրանսիա: Արևելեան Ասիայի խնդրի առթիւ: Քաղաքական լուրեր: Թուրքիա: Լուրեր: «Նոր-Դար»-ի խմբագրութեան: Բանասիրական. — Համբարձման օրը ս. Փրկչի հիւանդանոցում: Տեղեկատու: Յայտարարութիւններ:

ՀԵՌԱԳԻՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

«Ռուս Հեռ. Գործ.»-ը մայիսի 23-ից, Նոր-Նախիջևանից հեռագրում է մեզ.

«Ամենայն Հայոց Կաթողիկոսը ճանապարհ ընկաւ դէպի Պետերբուրգ»:

Թիֆլիս, 23 մայիսի 1895 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ:

Քանի Սասունում կատարուած անգթութիւնների, թուրք կառավարութեան հայ անզէն ժողովրդի վրայ գործ դրած զազանութիւնների մասին սրանից ամիսներ առաջ միայն լուրեր էին շրջում, և դեռ ևս տեղն ու տեղը հետազօտուած չէին այդ միջնադարեան արարքները, — մի կարգ եւրոպական թերթեր խիստ մեծ թերահաւատութեամբ էին վերաբերւում դէպի Սասունի վերջին անցքերը, համարելով այն չափազանցութիւն, դէպի թուրք կառավարութիւնը եղած թշնամութեան արդիւնք, զրպարտութիւն... Անցան ամիսներ, և ժամանակի խիստ կարճ տևողութիւնը, գործին տեղեկանալու նկատմամբ գործ դրուած հարևանցի ջանքերը կարող եղան ապացուցանելու, որ Հայաստանից հասած լուրերը Սասունի անցքերի մասին, երևակայութեան պտուղ, թշնամութեան արդիւնք չեն եղել, այլ լուրջ, զուտ իրականութիւն, անժխտելի փաստեր:

Սակայն հակառակ սրան, հակառակ Հայաստանում կատարուած անգթութիւնները քննող եւրոպական յանձնախմբի ձեռք բերած՝ իրողութիւնը հաստատող ջախջախիչ փաստերի, և վերջապէս հակառակ անգլիական մի քանի թերթերի թղթակիցների՝ Թրքա-Հայաստանից գրած նամակների, որոնց մէջ տխուր և սեւ գոյներով է նկարագրւում առհասարակ թըրքահայ ժողովրդի անտանելի կացութիւնը, գեռ գտնուեցան մամուլի ներկայացուցիչներ, որոնք աշխատեցին ծածկել, սքօղել ձիւնի չափ մաքուր ճշմարտութիւնները, խեղաթիւրել ու անվստահութեամբ վերաբերուել դէպի իրականութիւնը...

Շատ պարզ է, թէ այդ կարգի թերթերի ընթացքը թշնամութիւն, չհամուիթիւն էր՝ ուղղուած մի հարստահարուած, ընկճուած ժողովրդի ճակատագրի դէմ. այդ անհաճոյ ու աներդաշնակ մի երգեր, որ շարունակւում է երգուել, և գեռ պիտի շարունակուի մինչև մտադրուած նպատակի գուռը: Թէ ո՛րքան գործ փչացրին այդ մարդոց կոկորդիլոսի արտասուքները,—յայտնի պէտք լինի գործի ընթացքին հետևող իւրաքանչիւր մարդու:

Ինչից յանձնախմբի հաւաքած տեղեկութիւններով Սասունի անցքերն ապացուցուելուց յետոյ, երեք կառավարութիւնների դեսպանները պատրաստեցին Թրքա-Հայաստանի համար անհրաժեշտ համարուած բարենորոգումների մի ծրագիր և յանձնեցին Թուրք կառավարութեան՝ ի գործադրութիւն:

Բարեփոխումների այդ ծրագիրը այն չէ, ինչ որ Թրքա-Հայաստանի ներկայ վիճակը պահանջում է: Դա, նոյն իսկ իւր ամբողջութեամբ Թուրք կառավարութեան կողմից ընդունուած դէպքում անգամ,—որ անկարելի է,—անընդունակ է բարոյապէս ու տնտեսապէս քայքայուած մի ժողովրդի խոր վէրքերը բուժելու:

Եղած առաջարկների մեղմութիւնը, աւելի ճիշտն ասած, սահմանափակ լինելու հանգամանքն էր, որ իբրև մի անակնկալ, զարմացրեց եւրոպական մամուլի բարեխիղճ ներկայացուցիչներին, նոյն իսկ իրեն՝ Թուրք կառավարութեան:

Սակայն այժմ խնդրի առարկայ եղողը պետութիւնների կազմած ծրագրի՝ հայի պէտքերին անվերի պակասը լցնելով, իւր կրնսը պարզ աննն: Հրաւիրագրերին պատասխանեցին միքանի հոգի, և այս միքանի հոգու ներկայութեամբ «ս. պատրիարքը հաճեցաւ պատարագ մատոյց ու քարոզ խօսեց... Սեղանին նախագահելով լսեց շրջապատող պաշտօնէից անձինքների բաժակաճառները *)»...

Ո՞վքեր էին այդ պատուաւոր անձինք ասածդ:

—Ներկ եպիսկոպոս, հինգ վարդապետ, միքանի քահանայ, քաղաքական ժողովի դեր-ատենապետ Նուռուֆեան, հիւանդանոցի հոգաբարձութիւնը, Յովհաննէս Կիլոլենկեան և միքանի թաղական խորհրդի անդամներ: Ներկայ էին նոյնպէս «մօտակայ թաղերի ոստիկանապետք և այլ պաշտօնեայք **)»:

Ի՞նչ օր էր այն, ինչ ախուր օր...

Իսկ այս ապրիլայ մայիսի 11-ը, երբ ս. Էմիլեանի պատարագչութեամբ տեղի ունեցաւ նոյն հիւանդանոցում, նոյն Համբարձման տօնի հանդէսը,—միշտ անջնջելի պէտք է մնայ նրանց յիշողութիւնների մէջ, որոնք ներկայ

*) 1893 թ. «Նոր-Դար» № 91. «Օտարականն»:

**) 1893 թ. «Արևելք»-ի մայիսի 7-ի համարում, և նոյն թիւ «Նոր-Դար» № 91 «Օտարական»-ի յօդուածում:

լինելու բաղդն ունեցան:

Պաշտօնից ստիպմամբ առաւօտեան վաղ չկարողացայ ներկայ լինել: Երբ գնացի հիւանդանոց, պատարագի արարողութիւնն արդէն սկսուած էր: Իակ ուշ հասնողներին ոչ միայն անկարելի էր եկեղեցի ներս մտնել, այլ և նրան մօտենալ: Եկեղեցին բերնէ բերան, նրա բակը, հիւանդանոցի բակը, սրա առաջև գտնուող ահագին պարտէզը, ձախակողմեան ծառաստանը՝ մինչև յունաց հիւանդանոցի պարիսպները, պատերի վրայ, ծառերի վրայ, երկաթուղու գծի առջև գտնուող տափարակը, վերջապէս, ամեն տեղ լիքն էր ահագին բազմութեամբ, այնպէս որ ազատ անցուդարձ աննչ անհնարին էր: Բայց այս չէ բոլորը. մինչև կէս օր երկաթուղին էլ չարունակ ահագին բազմութիւն էր, որ բերում էր և իջեցնում հիւանդանոցի հանդէսը:

Թէև վաղօրօք որ և է ծանուցում չէ-ղաւ, այնուամենայնիւ ինքնաբերաբար այդ հանդիսին մասնակցող բազմութեան թիւը կըհասնէր մինչև 40—45 հազարի:

Ամենքն էլ ուրախ, ամենքն էլ ժըպտում, երգում էին «Մեր հայրենիք», «Մայր Աթոռ», «Էջմիածնի հնչ», «Հայ միութիւնք» և այլ այս տեսակ ազգասէր երգեր... «Կեցցէ Վեհափառ Խըրիմեան Հայրիկ», «կեցցէ Իզմիրլեան», «կեցցէ...» գոչում էր այդքան բազմութիւնը մի մարդու նման, ծափահարում էր նոյնպէս մի մարդու նման, կարծես թէ ելեքտրական թելերով ամենքի բերաններն ու սրտերը հաղորդակցութեան մէջ էին դրուած միմեանց հետ:

Առաջուայ նման միմեանց ականջի թիքուած չէին փսփսում, լուռ նչանախօսութիւնների, «չէ՞որ» բարբառի պէտք չկար, և ոչ ոք իւրաքանչիւր քայլափոխում յետ չէր դառնում, կամ չուրջը չէր պտտում տեսնելու, թէ կառավարութեան «ջոջ»-ները չեն հետևում, իւր խօսքերն ու քայլերը չեն լըրտեսում:

Ո՞ւր էր մնացել լրտեսների վոհմակը. իրաւ կային ոստիկան զինուորներ, բայց բազմութեան խառնութեան պատճառով անհնարին էր նրանց անցուդարձ անել: Իակ ինչ կըվերաբերի հեռու կանգնած զինուորներին,—նրանք ոչ միայն չէին խանգարում, ընդհակառակն հանդիսին մի տեսակ չուք էին աւելացնում:

Նայելով լրտեսների բացակայութեան, նայելով ոստիկանների ու զինուորների համեստ ընթացքին, մարդս պէտք է լինէր երեք պետութիւնների համար՝ անդուլ հետևելու և Բ. Դրան ստիպելու իւր արած առաջարկները գործադրել տալու նկատմամբ: Իսկ առաջարկները անելուց յետոյ ձեռքերը ծալել և սպասել օսմանեան կառավարութեան բարեխղճութեան, — դա նոյնքան անսովոր ու անբնական կըլինի, որքան, մի մօր՝ իւր կաթով սնուցած, գուրգուրանքով ու փայփայանքով մեծացրած զաւակը, առանց խղճահարուելու, գեռ ևս կատարելահասակ չդարձած, իւր խնամքից զրկելն ու բաղդին յանձնելը:

Երեք կառավարութիւնների յանձն առածը մի սուրբ գործ, մի արդար դատ, մի մարդասիրական ձեռնարկութիւն է, որ բոլորովին հակառակ հետևանքներ և արդիւնք առաջ կըբերէ, եթէ մինչև այդ կէտին հասցնելուց յետոյ, հըրաժարուեն առաջ տանելուց, գործին տէր կանգնելուց:

Առանց յոռետես լինելու, մեր երկիւղը այդ մասին շատ մեծ է: Որովհետև գեռ ևս ոչ մի բանի չձեռնարկուած, արդէն Թրքական աղբիւրներից բղխած տարաձայնութիւնները խնդիրը հետզհետէ սեղմում ու սահմանափակում են: Եւ եթէ այդպէս շարունակուի, միջամտող տէրութիւնների կողմից հակառակութեան չհանդիպած պարագայում, մենք հաւատացած ենք, որ Թուրք կառավարութիւնը բարենորոգումների ծրագիրը վերջ ի վերջոյ պիտի ամփոփէ մի աննշմարելի լինելու չափ փոքր շրջանակի մէջ, որի գոյութիւնն ինքն էլ մի վարկեան կասկածում էր, թէ դրանք լինին հայի անհայտ թշնամինները, հայի դարաւոր հալածիչները, հայի ծուծը քամողները, վերջապէս, Սասունը հայ արիւնով ներկողները...

Ի՞նչ էր պատահել. արդեօք Թուրքիան, այն երէկուայ բարբարոս և հայ արեան ծարաւի Թուրքիան այսօր դարերի չափ քաղաքակրթուել, առաջադիմել էր, թէ...

Ո՛չ, ասած է՝ անճարն է կերել բանջար: Այդ խաղաղ հոգով, այդ հաստատ դիրքի և լուռ համբերատարութեան տակ ևս նշմարում էի այն զըսպուած ակամայ լուսթիւնը, համբերութիւնը, որպէս լուում ու համբերում է ամիսի վազն իւր գառագղի մէջ փակուած և գաղանազուսպի հրաշէկ չափուրներով զսպուած:

Պատարագի արարողութիւնից յետոյ, հոգեհանդիսա կատարուեցաւ եկեղեցու մէջ հիւանդանոցի հանգուցեալ բարերարների յիշատակին, որոնց մէջ առաջին տեղը գրաւում է Պէզճեան Յարութիւն ամիրան: Ապա՝ շրջապատուած հոգևորական դասով և աշխարհական երեւելիներով ս. պատրիարքը դուրս եկաւ եկեղեցուց:

Իրաւանցումը նկարագրել կարելի չէ, այդ 40—45 հազար հոգին միմի-

ՀՈԴՎԱԾՔ

Բնագրի նշումներ և թերթերու մեջ եղած սխալները ուղղված են առանց առանձին նշումի։

Ա. Պողպատեայ Ոտքեր Ընտրութիւն Ամերիկեան Ապրանքներու Համար

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ ամէն տարի 1-ին կամ 2-ին կը հրատարակուի Ամերիկեան Ապրանքներու Ընտրութեան Ցանկը։ Այդ ցանկին մէջ կը գտնուին ամէն տեսակ ապրանքներ, որոնք ամերիկացի գնորդները կրնան ընտրել։ Ցանկին մէջ կը գտնուին նաեւ ամերիկեան գործարանները, որոնք կը պատրաստեն այդ ապրանքները։

Ամերիկացի գնորդները, որոնք կ՚ուզեն գնել ամերիկեան ապրանքներ, կը դիմեն այդ ցանկին մէջ գտնուող գործարաններուն։

Ցանկին մէջ կը գտնուին նաեւ ամերիկեան գործարանները, որոնք կը պատրաստեն ոտքերու համար պողպատեայ ոտքեր։ Ահա այդ գործարաններուն անունները։

Ամերիկեան Ոտքերու Գործարան, Ամերիկեան Ոտքերու Ընկերութիւն, Ամերիկեան Ոտքերու Ընկերութեան Գործարան, Ամերիկեան Ոտքերու Գործարան, Ամերիկեան Ոտքերու Գործարանի Ընկերութիւն, Ամերիկեան Ոտքերու Գործարանի Ընկերութեան Գործարան

ամբողջ հասարակութիւնը, որի չահերը կապուած են իրարու հետ։

Եթէ տէրութիւնն աչքի առաջ ունենալով այդեաէրերի այս և յաջորդ տարուայ ունեցելիք վնասները, նիւթական օժանդակութիւն չհասցնի, ժամն կըլինի բաց չանի և այդիներից առնելիք տուրքը գոնէ երեք տարի չբաշխուի, չատ այդիներ ձեռից դուրս կըգան և աւելի զգալի հարուած կըլինի տեղական այդեգործութեան և գինեգործութեան։

Իսկ մեր կողմից խորհուրդ կըտայինք այդեաէրերին կարկտահար եղած վազերը չուտ ուղղելու համար հետեւեալ միջոցները գործ դնել. *) Ինչքան կարելի է չուտով սկսել վազերը կարել, այս տարի դուրս ձգած զօղերի հարուածուած տեղերից մի քանի աչք ցած, նայելով զօղի երկարութեան ու կարճութեան, և նրանցից առաջիկայ տարուայ համար կարճ կարճ մատնացոյց (չիլինդ) պատրաստել։ Այդպէս կըսըրուած վազերը լաւ հանգամանքներում այս տարի էս կարող են քիչ բերք տալ և պտուղ հասցնել, իսկ առաջիկայ տարին դրանք ուղղուած կըլինին արդէն։

բ. Վազի վրայ գտնուած բոլոր անպտուղ և նուազ չիւերը թափել, թողնել միայն զուարթ պտղատուները, որ վազի ուժերը կեդրոնանան միայն դրանց վրայ։

գ. Մինչև յունիս 10-ը վազերը չչըկել, որ յաճախակի եկած անձրևներից գոյացած խոնաւութիւնը պակասի, հողը տաքանայ, որ վազի աճելութեան գործարանները չուտով ուղղուին, կազդուրուին, ապա թէ ոչ, ջրելով, որ անդիւութեամբ արդէն սկսել են չատերը, հողը կըցրտանայ և աճելութիւնը կանգ կառնի։

դ. Զինայել այդիներին վերաբերեալ բոլոր աշխատութիւնները, այն է՝ քաղհանը (ալան քաչելը), պարարտացնելը, ջրելն և փորելը իւր ժամանակին կատարել։ Վազերը այժմ աւելի են կարօտ խնամքի, քան առաջ ժամանակը։

ե. Ապագայում այդպիսի պատուհասների առաջն առած լինելու համար, այն այգինները, որոնք յարմարութիւն ունին, քամուց պաշտպանել խիտ տերև ունեցող ու չուտ աճող թփերով ու ծառերով։ 18-ի առած հարուածի ոչ այնչափ կարևուտն է եղել պատճառ, որչափ քամին, որ վազերի զօղերը խըփելով նեցուկ առած եղեգներին (զարպուած էր կուսակից գիւանագիտական կատարելագործուած, խորամանկ խաղերի դէմ, ուր գործուած մի չնչին սըխալ քայլը, սխալ խօսքը կարող էր հայկական խնդիրը բոլորովին տակնուվրայ անել. Թողնենք այն, որ ս. Իզմիրլեանը բազմից պատրիարքական այն դահի վրայ, որ օսմանեան փայլուն ոսկիներով ու չքանչաններով կաչառուած՝ խաղալիկ էր դարձած ոչ միայն Թուրք մինիստրութեան ձեռքում, այլ և հասարակ ոստիկանների ձեռքում...

Այժ, Թողնենք այս կարդի չատ դրծեր և ենթադրենք, թէ դրանցով նա իրաւունք չունենայ հերոսանալու. սակայն, կարող ենք աչք դոցել և այն բանի վրայ, որ Պոլսի հայ բնակիչները, որոնք ամբողջ Թրքա-հայերի կրօնական, ազգային, կրթական և այլ գործերի գլխը գարձնողն են, քանի՛ քանի՛ տարրեր և միմեանց անհաչտ կուսակցութիւնների էին բաժանուած, և թէ ս. Իզմիրլեանն ինչպէս կարողացաւ այնքան կարճ ժամանակի մէջ այդ տարիների անհաչտ թշնամիներին հաչտեցնել, ի մի ձուլել...

Ապացոյց կուզէք.—ահա ս. Փրկչի ազգ. հիւանդանոցի հանդէսը, որի մասին է խօսքս։ Պոլսի ունի մօտաւորապէս 200 հազար հայ կամ 50 հազար հայ տուն. եթէ ի նկատի առնենք, որ չատ ընտանիքներ աղքատ լինելով անկարող էին ամենաքիչը 10 պահեկան դուներին), կոտրատել է։ Փորձն արդէն ցոյց է տալիս, որ ծառերով պաչտպանուած այդինները քիչ են վնասուել։

ը. Վերջապէս մտածել կարկտից ապահովութեան հարցի մասին, և եթէ կարկուտը 5—6 տարին մի անգամ պատահում է, անպատճառ ապահովացնել այդինները։

Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց։

Դանձակ,
21 մայիսի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ։

—

(«Նոր-Դար»-ի թղթակցից)։

—

Կ. ՊՈԼԻՍ, 12 մայիս

Այս օրերս ամերիկական մի զրահաւոր նաւ եկել և Մերսինի առջևը խարիսխ էր ձգել, թնդանօթների բերանները քաղաքին ուղղելով։

Այդ պատերազմական նաւի վերայ գտնուող ծովակալն իւր օգնականներով և ծովային սպաների ուղեկցութեամբ ցամաք է դուրս գալիս և, հարցուփորձ անելով, գտնում է ամերիկական *Consul* (հիւպատոսի) բնակարանն և ներս մտնելով, առաջին հանդիպողին հարցնում է.

—Դուք ով էք, ինչ էք։

—Ես Ամերիկայի կոնսուլն եմ։

—Եթէ դուք Ամերիկայի կոնսուլն էք, հապա ինչպէս է լինում, որ այստեղ հայերին բանտարկում, հալածում են և դուք չէք պաչտպանում։ Ո՞վ է այս քաղաքի մեծը։

Վալին, պատասխանում է չփոթուած կոնսուլը, որ ազդով յոյն է լինում։

—Գնացէք և ասացէք վալիին, որ ինձ մօտ, չոգնաւ չնորհ բերէ...

Կոնսուլը գնում է վալի փաչայի մօտ և յայտնում ծովակալի պատուէրը։

Վալին չէ իմանում, թէ ինչ պատասխանէ և յետոյ մտածելով ասում է, թէ կարգն պահանջում է, որ ծովակալը առաջ իրեն մօտ գայ և յետոյ ինքը կերթայ նրան այցելութեան։

Այս պատասխանով վհնուած խեղճ կոնսուլը գնում է չոգնաւ և յայտնում ծովակալին։

Այս վերջինս չատ բարկանում է կոնսուլի վրայ և պատուիրում է նրան, որ գնայ այն անպիտանին ասի՝ իսկոյն իւր մօտ, նաւը գալ, հակառակ դէպքում, իսկոյն կըռմբակոծէ քաղաքը։

Առանց այն էլ չփոթուած, կոնսուլը բոլորովին գլուխը կորցնում է և չըվիտէ, թէ ինչպէս անէ, որ մի կերպ վալի փաչային նաւը տանէ։ Այդ աչողւում է նրան։

Ծովակալը վալիին ընդունելուն պէս հարցնում է.

—Դուք էք այս քաղաքի մեծը։

—Այո, ես եմ...

—Այդ ինչպէս էք կառավարում, ինչպէս էք համարձակւում հայերին հալածել, բանտարկել. մի՞թէ բաւական չէ, ինչ որ մինչև այժմ քրիստոնեայի արիւն խմեցիք, գնացէք, բանտարկեալ հայերին արձակեցէք։

—Ես չեմ կարող բանտարկեալներին արձակել, մինչև որ կեդրոնից հրաման չստանամ։

—Կեդրոնին հարցրէք, երբ բանտարկեցիք,—զայրացած ասում է ծովակալը, գնացէք և եթէ մինչև չորս ժամում չէք արձակիլ, քաղաքը կըռմբակոծեմ։

Այս յայտնելուց յետոյ, ծովակալը կարգադրութիւններ է անում և նաւը պատերազմական դիրք է ընդունում։

Վալին նաւից ցամաք է վերադառնում, ջղայն հաւաքում ու խորհրդակցում։ Այդ խորհրդի հետեանքն այն է լինում, որ վալին միքանի բանտարկեալներին արձակում է, իսկ մնացածների մասին աղաչում է և ժամանակ խնդրում, որ կեդրոնին իմաց տայ։ Ժամանակ ստանալով, վալի փաչան այստեղ է հեռագրում։ Բ. Դուռը այս մասին հարցմունք է անում տեղւոյն ամերիկական դեսպանին։ Ինչպէս երևում է, ամերիկական դեսպանը՝ միստըր Թըրլը գործից տեղեկութիւն չէ ունեցել. նա նստում է դեսպանական չոգենաւն և գնում։ Լրագրները թէպէտև գրեցին, թէ դեսպանը նգիլատոս ճանապարհորդութեան է գնացել, բայց այդ սուտ էր. նա վերը պատմած գործի համար գնաց։

Ձեր սովորական թղթակիցն անտարակոյս կըզրէ ձեզ Համբարձման օրը ս. Փրկչի հիւանդանոցում կատարուած հանդիսի մանրամասնութիւնը, որին ականատես էի։ Ինչպէս իմացայ, այդ հանդէսը պարբերաբար կատարւում է եղել ամեն տարի, և միմիայն պաչտօնից զըրկուած Աչըղեան պատրիարքի օրով վերացուած է եղել։ Հանդէսն ինձ վրայ չատ խոր տպաւորութիւն թողից. հիւանդանոցի դիմացի պալտէզները, դաչտերը լցած էին բազմութեամբ, մեծ թէ փոքր, մարդ թէ կին, մօտ յիսուն հազար հոգի կըլինէին. կային և յատուկ հրաւիրուածներ, որոնց համար տեղ էր պատրաստուած։ Պատարագը կատարուած էր յատկապէս հրաւիրուածների համար, թուով 225—230 հոգի։ Այնտեղ էին հոգևորական դասից բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ՝ աչխարհական դասից՝ հիւանդանոցի հոգաբարձութիւնը, բժիչկների խումբը և այլ պատուաւոր անձեր։ Բացի այս բոլորից, նոյն տեղանի հոգին ու զարդն էին կազմում նաև հիւանդանոցի խնամակալուհիներից չորս պատուաւոր ընտանիքի կանայք, որ, ինչպէս հաւատացնում էին, առաջին օրինակն էր։

Ս. Պատրիարքն առաջին անգամ բաժակ առնելով, խօսեց հիւանդանոցի նչանակութեան և նրա տուած մարդասիրական մեծ օգուտների մասին, որ պատկանում է ամբողջ ազգին. նա չէ տեց ազգի սրած գիտակցական այն օժանդակութեան վրայ, որով այսքան տարի ապրել է այդ գթութեան մեծ հաստատութիւնը և որը պիտի չպրուենակի ապրել ու իւր ծածկի տակ խընամել գթութեան աւելի լայն սկզբունքներով, քանի՛ որ հայ ազգը կըճանաչի իւր նուիրական պարտականութիւնը դէպի գթութեան, խնամքի և պաչտպանութեան կարօտ դժբաղդները։ Ցիչելով նոյնպէս օսմանեան սուլթանների այդ հաստատութեան արած չնորհները, աւելացրեց, թէ նոյն չնորհը վայելում է նաև ներկայ սուլթանից և միքանի բարեմաղթութիւններ արեց նրա կեանքի և արևչատութեան մասին։

Ս. Համայկակ Դիմաքսեանը երկրորդ բաժակն առաջարկեց Էջմիածնայ Մայր-Աթոռի և Վեհափառ Կաթողիկոսի կենացը. հակիրճ, բայց աքանչելի կերպով բացատրեց Նրա վեհութիւնը, նուիրականութիւնն ու մեծութիւնը. նա խօսեց նչանակութեան մասին հայ մեսիական այն միակ փայլուն ու չողչողուն ասպղի, որ հաստատուած Աւրարատեան աչխարհի սրտի վրայ, միչտ դէպի ինքն է յառած ամբողջ հայութեան աչքը, իւր վրայ է կեդրոնացրած ամբողջ ազգի յոյսը, հաւատքը, սէրը...

Հրաւիրուածները ներսից, իսկ բազմութիւնը դրսից միաբերան դոչեցին «կեցցէ Մայր-Աթոռը, կեցցէ Խրիմեան Հայրիկը» ու այդ կեցցէներին յաջորդեցին ծափահարութիւնները և հայկական զանազան ընտիր երգեր։

Զարմացած էի, և այս վայրկեանիս էլ ինքս ինձ հաչիւ տալ չեմ կարող, թէ ինչպէս տասնեակ հազարաւոր բազմութիւնը, որ գանւում էր այնքան հեռաւոր տարածութեան վրայ, կարողացաւ միաբերան մասնակցել այդ կեցցէներին. արդեօք, ինչպէս վերն էլ ասացի, այդքան բազմութեան սրտերն ու բերանները միմեանց հետ կապուած էին որ և է հաղորդիչ թելով...

Երրորդ բաժակն առաջարկուեցաւ ս. պատրիարքի կենացը։ Կեցցէների ու ծափահարութիւնների ազմուկը կրկին պիտի գանուին բոլոր դեսպանները, և ինքն առենաբանութիւն է անելու։ Այդպէս ինձ ասացին անգլիական դեսպանատանը։

Amicus։

ց. Գ. Նամակս պատրաստին յանձնելու մըջոցին իմացայ, որ սուլթանը համաձայն է տարագրելու բեֆորմների ծրագիրը (կանոնադրութիւնը), «միայն կըվախենամ,—ասել է,—իմ ժողովրդից, որովհետև մոլեռանդ է և կարող է կոտորած անել, երբ տեսնէ, որ ինձ վրայ ճնշումն անելով, կամենում են ինձ տարագրել տալ. եթէ չէյխ-իսլամը տարագրվի, այն ժամանակ ես գիւրութեամբ կըտարագրեմ»։

Հաւատացնում են ինձ, որ այսօր, ուրբաթ չէյխ իսլամը տարագրել է... կապրենք, կըտեսնենք.

Amicus։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ. — Անգլիական կաբինետի ազատամիտ մասը, հակառակ պաչտօնական հերքումներին, չատ հեռու չէ կազմալուծուելուց։ Պրեմիերի հիւանդութեան մասին լաւ չի խօսւում առհասարակ, և մինչև՞ անգամ այն կարծիքն են յայտնում, որ լորդ Րոզբերրին արդէն պատրաստած է իւր հրաժարականը և մօտ ժամանակներս կըյանձնէ, ուր հարկը է։ Մինչև իսկ կառավարութեան կողմնակիցներն իրենք յայտնում են, որ ներկայ վարչութեան կեանքը չատ կարճատև է։

—

ԻՏԱԼԻԱ.— Վերջին օրերս կատարուեցաւ իտալական պարլամենտի ընտրութիւնները, որի արդիւնքը հեռագիրը արդէն հաղորդեց։ Այդ ընտրութիւնների ժամանակ մինիստր-նախագահի արտասանած ճառը այն տպաւորութիւնն առաջ չի բերել, ինչ որ կըյուսար ինքը։ Իտալական թերթերի մեծ մասը նպաստաւոր չեն խօսում այդ մասին։ Մինչև անգամ Կրիսպիի համակիր թերթերը գտնում են, որ պրեմիերը ծայրայեղութեան հասցրեց մի կողմից ամենամտայլ գոյներով նկարագրելով Իտալիայի դրութիւնը մինչև իւր՝ կառավարութեան գլուխ անցնելը, իսկ միւս կողմից չափազանց վարդագոյն ներկայացնելով Թագաւորութեան ներկայ պայմանները, ամեն ծառայութիւն վերագրելով իւր մտ-ին, Մասնաւորապէս պիտի գանուին բոլոր դեսպանները, և ինքն առենաբանութիւն է անելու։ Այդպէս ինձ ասացին անգլիական դեսպանատանը։

Amicus։

ց. Գ. Նամակս պատրաստին յանձնելու մըջոցին իմացայ, որ սուլթանը համաձայն է տարագրելու բեֆորմների ծրագիրը (կանոնադրութիւնը), «միայն կըվախենամ,—ասել է,—իմ ժողովրդից, որովհետև մոլեռանդ է և կարող է կոտորած անել, երբ տեսնէ, որ ինձ վրայ ճնշումն անելով, կամենում են ինձ տարագրել տալ. եթէ չէյխ-իսլամը տարագրվի, այն ժամանակ ես գիւրութեամբ կըտարագրեմ»։

Հաւատացնում են ինձ, որ այսօր, ուրբաթ չէյխ իսլամը տարագրել է... կապրենք, կըտեսնենք.

Amicus։

ԻՏԱԼԻԱ.— Վերջին օրերս կատարուեցաւ իտալական պարլամենտի ընտրութիւնները, որի արդիւնքը հեռագիրը արդէն հաղորդեց։ Այդ ընտրութիւնների ժամանակ մինիստր-նախագահի արտասանած ճառը այն տպաւորութիւնն առաջ չի բերել, ինչ որ կըյուսար ինքը։ Իտալական թերթերի մեծ մասը նպաստաւոր չեն խօսում այդ մասին։ Մինչև անգամ Կրիսպիի համակիր թերթերը գտնում են, որ պրեմիերը ծայրայեղութեան հասցրեց մի կողմից ամենամտայլ գոյներով նկարագրելով Իտալիայի դրութիւնը մինչև իւր՝ կառավարութեան գլուխ անցնելը, իսկ միւս կողմից չափազանց վարդագոյն ներկայացնելով Թագաւորութեան ներկայ պայմանները, ամեն ծառայութիւն վերագրելով իւր մտ-ին, Մասնաւորապէս

բալէս վատ տպաւորութիւն է գործել Կրիսպիի այս խօսքերը. «այն ժամանակ Իտալիան իւր բոլոր ուշադրութիւնը դարձրած էր ինձ վրայ և ինձնից էր յուսում ամեն բան։ Իսկ հակառակ կուսակցութիւնների թերթերը չափազանց վատ են խօսում նրա արտասանած այդ ճառի մասին։ Արմատական կուսակցութեան օրգան «Secolo» թերթը նրան անուանում է անպիտան, խաբեբայ և այլն։ Ինչպէս լրագրները հաղորդում են, կառավարած ընտրութիւնները չի կարելի Կրիսպիի համար նպաստաւոր համարել։ Նրա հակառակորդներից ընտրուողների մէջ ամենից աւելի աչքի են ընկնում Դը-Ֆելիչէն և Բարբատոն, որոնք Սիկիլիայի ապստամբութեան մասնակից լինելու պատճառով դատապարտուած էին բերդարգելութեան։

—

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիական Կլերմոն-Ֆերրան քաղաքում այս օրերս խաչակրաց առաջին արշաւանքի 800-ամեայ տարեդարձի առթիւ, սկսուած են տօնախմբութիւններ։ Կլերմոնում ժողոված են քառասուն եպիսկոպոսներ և ֆրանսիական ու Մալթայի ասպետութեան ներկայացուցիչները։ Եպիսկոպոսները ասպետների հետ միատեղ միջնադարեան հագուստներով, տարեդարձի օրը, հանդիսաւոր թափօրով, եպոսկոպոսական պալատից՝ փողոցները չրջելով գնացել են քաղաքի մայր եկեղեցին։ Քարող է խօսել նշանաւոր պերճախօս Մոնսաբրէ պատերը, որ Պետրոս ամիենացու նման խաչկրաց արշաւանք է քարոզում, բայց ոչ անհաւատների դէմ, այլ ժամանակակից ապականուած բարքերի դէմ։

—

ԱՐԵՒԵԼԵԱՆ-ԱՍԻԱՑԻ ԽՆԴՐԻ ԱՌԹԻԻ.—Չին-ճապոնական խնդիրը, ինչպէս ուրիշ անգամներ էլ յայտնել ենք, դեռ բոլորովին լուծուած չի կարելի համարել։ «Berlin. Tageblatt» թերթը, միացնելով այդ խնդրի մասին յայտնուած թեր և դէմ կարծիքները, ասում է. «Թէև Ֆրանսիայի, Ռուսիայի և Գերմանիայի միաձայն արած առաջարկները ստիպեցին Ճապոնիային յետ կենալ Լիաօնդ թերակղզուն տիրելու խորհրդից, բայց և այնպէս այդ խնդիրը չի կարելի վերջնականապէս կարգադրուած համարել։ Ջնայելով, որ Կորէայի անկախութիւնը ապահովուած է, սակայն Ռուսիան ոչ մի կերպով չի կարողանում հաշտուել Ճապոնիայի՝ Կորէայի թագաւորութեան մէջ գերակշռող դեր խաղալու մտքի հետ։ Պատմում են մինչև անգամ, որ ռուսական արտաքին գործերի մինիստրութիւնը այդ մտքով բանակցութիւններ է բացել Տոկիոյի ալբոմների հետ։ Այս երկրորդ կէտը ռուսական պահանջների, ինչպէս երևում է, ֆրանսիական և գերմանական կաբինետների կողմից այն քաջալերութիւնը չէ գտել, ինչ որ այդ կառավարութիւնները ցոյց տուին Ճապոնական կառավարութեան արած առաջարկների ժամանակ Լիաօնդ թերակղզուց հրաժարուելու մասին։ Սրբանից հետևում է, որ Ռուսիան այդ կէտում պարտաւորուած է առանձին գործելու, ուստի չատ հեռաքրքիր է, թէ Ճապոնական կառավարութիւնն ինչ կերպ կըվերաբերուի ռուս կառավարութեան արած նոր առաջարկներին»։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Գահիրէից «Daily News»-ին հեռագրում են, որ բրիտանական նաւախումբը Ալէքսանդրիայից Բէյրութ է գնում այնտեղ կատարուող անկարգութիւնների պատճառով։

—

«Fremdenblatt»-ը, խօսելով Գոլոխովկու մասին, ապացուցանում է, որ Աւստրիայի արտաքին գործերի նոր մինիստրի գործունէութեան նպատակը պիտի լինի չարունակել Կայնոկիի քաղաքաւոր քաղաքականութիւնը։ «Ռուսիան, Անգլիան, Ֆրանսիան և մինչև անգամ Գերմանիան,—ասում է յիշեալ լրագիրը, ներկայումս զբաղուած են Եւրոպայից դուրս դանուած գործերով, իսկ այդ բանից այն կառաջանայ, որ մի կողմ ղրուած եւրոպական տարաձայնութիւնները կըվերջանան, և «զգեցը կըսովորեն հանդիստ կերպով քննել գործերը, այնպէս որ, նախկին դժուարութիւններն այժմ աւելի քիչ տպաւնալի են»։

—

Հիւսիսային Ջրանցքի բացման հանդէսներից յետոյ ռուսաց և ֆրանսիական նաւերը միասին Կիլից անմիջապէս կըզնան Կոպենհագէն, իսկ այնտեղից — դէպի Սալանիայի նաւահանգստներից մէկը։

—

Բժիշկները Ստամբուլովի առողջութիւնը քաջքայուած են համարում և խորհուրդ են տալիս, որ նա անպատճառ գնայ հանքային ջրերը։ Ջնայելով Ստամբուլովի դիմումներին, կառավարութիւնը յամառութեամբ մերժում է նրան արտասահմանի ուղեգիրը տալ։ Սոֆիայի պրեֆեկտ ամբողջ Բուլգարիայի ոստիկանատներին մի չրջաբերական է ղրկել, որով կարգադրում է աչալուրջ լինել և արգելք դառնալ, եթէ Ստամբուլովն արտասահման գնալու լինի, առանց անցագրի, որպիսին չի տրուած նրան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան չէն ամուսնանում ամուրինները.—Բելլինի թերթերից մէկը մրցանակ էր նըշանակել այդ հարցի համար։ Հարցը ձևակերպւում էր այսպէս. «Ինչպէս ենք մեր ընթերցողներից նրանց, որոնք ամուսնացած չեն և երևոյն տարեկանից անց են, համառօտ կերպով գրեն մեզ, թէ ինչու չեն ամուսնանում»։ Ստացուած է 147 պատասխան։ Մրցանակը ստացել է էլինգենցի մի ամուրի։ Իւր չամուսնանալը պատճառաբանում է հետևեալ կերպով. «Երիտասարդ հասակիցս ես փառասիրական ձգտումներ ունէի, և ինձ միայն լաւ բանը դոհացում չէր տալիս։ Իդէալիստ չլինելով, ես չէի կարող հաւատալ, թէ երբ և իցէ արդարանալու են բանաստեղծի այն խօսքերը, թէ՝ «երկու հոգի միակերպ են մտածում, երկու սրտեր մի զարկ ունեն...» Իբրև նիհիլապաշտ, ես պէտք է պնդեմ, թէ՝ որովհետև իսկական երջանկութիւնը նոյնպէս հազիւ է վիճակում ամուսնացածներին, ինչպէս և գլխաւոր դուռմարը վիճակ հանողներին,—ուստի յոյս ունենալ դրա վրայ աւելորդ է։ Իբրև եռասէր, յայտարարում եմ. ինչու համար այդպիսի մեծ զոհաբերութիւն անեմ. մինչ ամուսնանալ չի նշանակում ե-ը մեռցնել։ Իբրև մազալուծարդ, յայտարարում եմ. վող ունեցող աղջկայ վրայ չեմ ամուսնանալ, իսկ վող չունեցող աղջիկն էլ ինձ հարկաւոր չէ»։ Ամուրիներից մէկը խոր հոգոց անելով ասում է. «Հայր դառնալ դժուար չէ, բայց հայր լինել, ո՛ Աստուած, ինչպիսի՛ ծանր բեռ»։ Մի ինչ-որ միլիոնատէր ամուրի մարդ էլ Հայոց կղզիներից գրում է. «Ամօրիք աղջիկ չեմ ուզում, սպիտակամորթ էլ չեմ ճարում»։

ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Նոր-Դար»-ի № 84-ում տպուած է, որ իբր Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը հրաժարեցրել է տեսչի պաշտօնակատար պ. Ց. Սաղաթելեանին իր պաշտօնից։

Ի հերքումն այդ լուրի յայտնում եմ, որ հոգաբարձութիւնը չէ հրաժարեցրել պ. Սաղաթելեանին, այլ ինքը պ. Սաղաթելեանն է յայտնել հոգաբարձութեանն, որ հրաժարւում է իր պաշտօնից։

Հերթակալ հոգաբարձու՝ Սամուէլ Բալասանց

Թիֆլիս, 22 մայիսի։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ընդրկով. երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաքում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաքում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բաքու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7. ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բաքում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաքում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացք Բաքումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաքումից Թիֆլիս դուրս է գնում դիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիս հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գալիս դիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլսից հասնում ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիս-Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր., հասնում Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիս դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին, հասնում է Թիֆլիս առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

Պատ. երթ. Ուազմա-վրացական ճանապարհով

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտեան 8 ժամին, դիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց դիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտուայ ժամը 8 ին դիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վերջ հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց դիշերելու հասնում է Թիֆլիս հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆԸ

Նախկին տարիների նման ամառուայ ընթացքում ընդունում է հիւանդները

Լաստեղեան հանդային ջրերում

(656) 3—1

Ի գիտութիւն հայ թարգմանիչների և հասարակութեան պատիւ ունիմ յայտնելու, որ արդէն ձեռնարկել եմ

ՍԱԿԻԱ-ՄՈՒՆԻ

հինաւուրց իմաստասէր (պրոյցներ Բուդդայի մասին) գրքոյկի թարգմանութեան. հեղ. Շիւրէի։

ԱՐՇԱԿ ԵԴԻԶԱՐԵԱՆ

5—3

Ուրբաթ, մայիսի 26-ին Թիֆլիսի արքունական թատրոնում հա
թատերասէրները տալու են մի ներկայացում յօգուտ Թիֆլիսի հայու
Հետաց բարեգործական ընկերութեան։

Տոմսակները կարելի է ստանալ ընկերութեան կար ու ձևի գրա
րոցում (Գանակովսկայա №25), իսկ ներկայացման օրը թատրոնի կա
սալում։

(657) 3—1

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C

ՆԱՒԱՊՆԱՅՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„Ն. ՊԱՔԷ եւ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄ
ՄԱՐՍԷՅԼ, երկու չաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքնե

Բաթումից դուրս է գալիս չորեքչաբթի, մայիսի 31-ին (յունիսի 12) «Արմե
չոգենաւը, նաւապետ՝ «Տիբալ»։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան առմսակները սովորական գիջումն ունին
Ապրանք յանձնելու կամ հանձապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները
ստանալու համար դիմել
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց քարվանս. Դէորգ պ
Բագուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ։
Նովորոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։

(316) 20—16

Ապահովագրուած անձերը, իրենց ապահովագրութեան հենց ա
առաջին տարուց, մասնակցում են Ընկերութեան տարեկան հաշիւնե
ըից յայտնուող օգուտներից 50%-ին։

Նրանց, այդպիսի մասնակցութեան փոխարէն, նոյնպէս բաւա
կան նշանաւոր արտօնութիւններ են արուում ձերբա
նալու կամ իշ խատանքի կատարելապէս անընդունակ
դառնալու դէպքում։

(331) 40—17.

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՈՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՔ 2.500.000 ր.
Բոլոր պահեստի գումարներից

ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական եւ անշարժ կայքերի.

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ծովային, գետային եւ ցամաքային այլ եւ ապահովագրութիւն նաւերի.

ԿԵՆԱՆԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

առանձնապէս ձեռնտու պայմաններով եւ արտօնութիւններով
ի դէպ աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ.—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ր. դրամագլխի, որ պ
տի կտրուի իր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահով
դրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամսում վճարէ 78 ր., եթէ ցանկանում
արտօնութիւններ անընդունակ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապ
հովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձերի ընտանիքների համար, որոնք մի
ջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որպիսիսկ ապահովագրուած անձ
աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխը ապրուստի միջո
ների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունւում և ամեն
տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան
մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիսում (Վելիամինովս
կայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հաստատութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդու
նելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաչտարար դատարանի կողքին, տ
Ալեխանի, Ֆեօդոր Ալէքսանդրովիչ Իվանովի բնակարանում։

(336) 100—23

Տեֆլիսъ Дозв. Цензуроюъ 22-го Мая 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. О. А. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ